2. ԽԼԵԶՆԸ

Ինում ա չինում էրկու ախպեր ըն ինում։ Մեծ ախպերը շատ խելունք ա ինում, ամմա պուճուրը՝ պրեալ։ Ըտրանք էրկուսն էլ ուրուր քըշտի յըն ապրում։

Մին քանի տարի ընցնելանը Ն։ոը պրեալ ախպերը մեծ ախպորն ասում ա.

— Էլ յրես քյրեզ նհետ օղում չըմ ապրիմ։

Մեծ ախպերը ճարը կտրած, տուս ա կյամ, սաղ ըլած-չըլածը ինքյն ա յոր օնում, մինակ մին եզնը պրեալ ախպորըն ա տամ։

Օրերան մին օր էտ կուճի ախպերը յոր ա օնում եզնը, վեր տանի ծախի ըրզարումը։ Ծմակեն մաշավը քյնալիս մին խլեզն ա տուս կյամ։ Էտ խլեզնը վրեն ա կենում, եշում էտ մարթին։

Պրեալը մուտանում ա, ընդրան ասըմ.— Էս եզնը ծախում ըմ, կյինը տասը մանեթ ա, առնում չը՞ս։

Խլեզնը կլխավ ա անըմ։

— Ա՛ խլեզնը, տրես հա՞, օրփաթ օրը կյլական ըմ փողը տանիմ։

Խլեզնը էլհա յա կլխավ անըմ։ Կյիժը հաշվըմ ա եզնը ծախած, թողըմ ա ծմակըմը ետ տառնում, կյամ տոն։

Օրփաթ օրը քյնամ ա համան էն տեղը, վեր եզնը ծախալ ա խլեզնին յրան։ Տրեսնըմ խլեզնը ընդեղ կաղնած, ամմա եզնը կա վեչ։

Փողը օղում ա, խլեզնը տեղան տուրուր չի կյամ։

Կյիժը կզնվում ա, մըհակը եր ա պիրում, թա թխի խլեզնին։ Խլեզնը նի յա մընընըմ քարեն տակը։ Կյիժը քարը պցրցնըմ ա, տես-

նըմ խլեզնին կոխկին մին կարաս վրեսկե։ Պրելը կլխան մին տասը մանեթ ա յոր օնում, ասըմ.—Տե՛ս, ա՛ խլեզնը, իվիլ եր չըմ կալալ հա՞, էքյուց ինձ շառավ չի տա՞ս։—Տասը մանեթը յոր ա օնում, կյամ տոն։

Մեծ ախպերը հըրցնըմ ա, թա.— Ցրեզնը հո՞ւր յրա ծըխեցիր։

Պրելը սկսըմ ա նաղլ անիլը։ Խելունքը վեր լսըմ ա մին կարաս վրեսկուն անըմը, խնթրըմ ա կիճի ախպորը, վեր տանի տեղը նշանց տա։ Մեծ նան կիճի ախպերքը եր ըն կենում, քյնում։

Շատ ըն քյընում, խրեգյ ըն քյընում, հըսնըմ ըն համին էն տեղին, շտեղ վեր վրեսկեն ա։ Մեծ ախպերը վրեսկեն ածըմ ա մեշոկին մեչը, շըլակըմ ըն, կյամ։

Ուրուգյունը վեր մթնըմ ա, ընդրանք հըսնըմ ըն մին տան։ Ըտեղ եր ըն կյամ, տեսնըմ ղաչաղնի։ Ընդրանք կըռեվ ըն անում։ Պրել ախպերը ընդրանց լոխճին սպանում ա, տանը քանդած տրոները շըլակում, ճընապար ընգնում։

Մեծ ախպերը վրեսկուն մեշոկը շըլակած, կուծինն էլ տրոները շըլակած պցրանում ըն մին չինարի ծառ։

Քշերվա կեսին մին քյարվան ա կյամ, էտ չինարուն տակին վեր կյամ։

Մին խրեգյ վեր կենում ըն, էտ կուծի ախպերը ասում ա.— Մեշկս ցավըմ ա, տոռնը տըվեր ըմ քըցըմ։

Մեծ ախպերն ասըմ ա.— Ա՛ պրել, հի՞նչ ըս ասըմ, տրանք յրա կտառնան մրեզ կըսպանին։

Պրելըն ասըմ ա.— Չէ՞, վեր չէ՞, վեր ըմ քցըմ։— Տոնները ծառին ճղները կուտրատելավ ընգնըմ ա տակին մարթկանցը կլխին։

Ըստրանք էտ հրաշկը վեր տեսնըմ ըն, թողում ըն ուրանց հարըստութունը, փախչըմ։

Ախպերը ծառան եր ա կյամ։ Մեծ ախպերը սկսում ա ըտրանց վրեսկեն հվաքելը, ամմա կուծին ըտրանց քյուլքերն ա հըվաքում։ Տանըմ ա տոն, վեր տակը քցի, տեղը տաք ինի։